



# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ՈՒՐԲԱԹ, 17 ՄԱՐՏԻ 2017Թ.  
№ 13 (431)

**Կա՛յ արդեօք մի  
այնդիսի բան,  
որի համար աստի  
թե սա նոր է...**

ԺՈՂՈՎՈՐ, ԳԼՈՒԽ Ա, 10



## Կապանը՝ 2016 թվականի մշակութային լավագույն քաղաքային համայնք

Փետրվարի 24-ին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի համայնքների միության անդամների ընդհանուր ժողովը, որի շրջանակներում տեղի ունեցավ նաև ավանդական «Լավագույն համայնք 2016» մրցանակաբաշխության արարողությունը, որը նպատակ ունի ավելի թափանցիկ ու հրապարակային դարձնել համայնքների գործունեությունը, ինչպես նաև ձեռնարկել առողջ մրցակցություն՝ խթանելով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացմանը: Մրցանակաբաշխությունն ավանդական է, անցկացվում է 2006 թվականից:

Ինչպես եւ նախորդ տարիներին, այս տարի եւս, հատուկ ձեռնարկված մրցութային հանձնաժողովի կողմից գնահատվել են ստացված հայտերը: Ըստ մրցանակաբաշխության արդյունքների՝ Կապանը ճանաչվել է «Մշակութային լավագույն համայնք 2016»: Մրցանակը հանձնվեց արարողությանը ներկա՝ Կապան համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանին:

էջ 4

kapan.am

## Կարեն Կարապետյանը ծանոթացել է Սյունիքի մարզի զարգացման ծրագրերին

Վարչապետ Կարեն Կարապետյանն աշխարհաբարձի այց է կատարել ՀՀ Սյունիքի մարզ:

Կառավարության ղեկավարը նախ եղել է «Տաթևեր» ճոպանուղու տարածքում, որտեղ տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում

«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի ներկայացուցիչները վարչապետին են ներկայացրել «Տաթևի դարպասներ» ներդրումային ծրագրի նախագիծը: Ծրագրի շրջանակում նախատեսվում է «Տաթևեր» ճոպանուղու «Հալիժոր» կայանի շրջակա տարածքում կառուցել «Տաթևի

դարպասներ» համալիրը, որի մեջ կներառվեն տեղեկատվական, ժամանցային եւ սպասարկման ենթակառուցվածքներ ու ծառայություններ՝ նպաստելով այցելուների քանակի աճին, ծառայությունների տեսակների ավելացմանը

## Տարեդարձի հանդիսավոր փոն զորամասում

Օրերս մեծ շուքով կշվեց գնդապետ Լեւոն Հովհաննիսյանի հրամանատարությամբ գործող, «Վարդան Մամիկոնյան» շքանշանակիր 60369 զորամասի կազմավորման 24-րդ փարեդարձը:

Արարողությանը մասնակցում էին 1-ին զորամիավորման հրամանատար, գեներալ-լեյտենանտ Տիգրան Փարվանյանը, ԲԿ վարչակազմի ներկայացուցիչներ, Գորիսի զինկոմ, գնդապետ Մելիքսեթ Պողոսյանը, Գորիսի քաղաքապետ Վաչագան Աղունցը, ԵԿՄ Գորիսի տարածքային բաժանմունքի նախագահ, փոխգնդապետ Սուրիկ Բաղդասարյանը, զորամասի կազմավորման գործում երախտավոր սպաներ, երկրապահներ, մեծ թվով ազատամարտիկներ, ապրիլյան քառօրյա պատերազմի եւ շարունակաբար զորա-

միավորմանը ցուցաբերած բարերարությամբ աչքի ընկած Գորիսի «Ծիածան» ՄՊԸ տնօրեն Գարիկ Գրիգորյանը, հյուրեր, դարձակազմներ: Միջոցառումը սկսվեց հարգանքի ու խոնարհման մեկ րոպե լռությամբ՝ ապրիլյան քառօրյա պատերազմի զոհերի հիշատակին:

Ներկայացվեց զորամասի ստեղծման պատմությունը, նրա անցած փառավոր մարտական ուղին, հիշատակվեցին 1993 թվականից ի վեր՝ նրա հրամանատարները, իրենց խիզախությամբ եւ բանակաշինության գործում ունեցած մեծ ներդրումով աչքի ընկած սպաները:

Երախտագետ հպարտությամբ նշվեցին զորամասի բոլոր ստորաբաժանումների՝ Արցախյան գոյամարտում ունեցած դերի ու կարեւորության մասին, նրանց ակտիվ մասնակցությունը ՀՀ եւ Արցախի Հանրապետության



սահմանների պաշտպանության, բնակավայրերի ազատագրման գործում, որի ընթացքում զորամասն ունեցավ 164 զոհ, 10 հոգի անհայտ կորած եւ մոտ 500 վիրավոր:

Նրանցից շատերը մարտադաշտում ցուցաբերած արիության, խիզախության համար

արժանացել են «Մարտական 1-ին աստիճանի» շքանշանի, զերատեսչական մեդալների, ցավոք, որոշներն էլ՝ հետմահու:

Ձորամասը կազմավորվել է պատերազմի

էջ 8



# ՄԻԽԱՅԵԼ ՕՐԱՆՅԱՆ. «Ուզում եմ, որ մարդիկ քվեարկեն ոչ թե Միխայել Օհանյանի, այլ նրա մոտեցումների օգտին»

33 Աժ 2017թ. ապրիլի 2-ի ընտրություններում «Օհանյան-Րաֆֆի-Օսկանյան» դաշինքի փորձաքային ցուցակի կազմում թիվ 12 ընտրատարածքում առաջադրվել է նաև Միխայել Օհանյանի թեկնածությունը: Միխայել Օհանյանը հարկապես Մեղրու փորձաքայնուում հայրնի է նախելառաջ որպես փնտեսագետ, ով երկար փորձեր աշխատել է բանկային համակարգում: 2013թ.-ին, սեփական դիմումի համաձայն, թողել է բանկի կառավարչի պաշտոնը, հրաժարվել Մեղրի համայնքի ավագանու անդամի պարտականություններից: Հարկապես վերջին փորձերին նա հայրնի է բնապահականակալ ակտիվ գործունեությամբ: Թեկնածու առաջադրվելու շարժառիթների, Մեղրու եւ առհասարակ Հայաստանի Հանրապետության առջև ծառայած բազում հիմնախնդիրների, դրանց լուծման հնարավոր փորձերի, «ՕՐՕ» դաշինքի մասին զրուցեցինք Աժ պարզամտ վորի թեկնածու Միխայել Օհանյանի հետ:

**Ա**րո՞ն Օհանյան, ինչո՞ր որոշեցիք մասնակցել Աժ ընտրություններին, մանավանդ որ արդեն մի քանի տարի է՝ ակտիվ գործունեություն չէք ծավալում՝ բացի բնապահական տարբեր հարցերի վերաբերյալ հրապարակումներ ներկայացնելուց:

– Ասեմ՝ առհասարակ որեւէ հարցի պատասխան ստանալու համար նախ պետք է պարզել, թե որտեղ է այդ հարցի առաջացման աղբյուրը, առանց դրա դու չես կարող գործողության որեւէ քայլ անել, ստեղծված իրավիճակից դուրս գալու ճանապարհ ցույց տալ: Երբ սկսում ես խորապես ուսումնասիրել այն ծրագիրը, որով համարյա բոլորին հայտնի կազմակերպությունը ձգտում է համաշխարհային տիրապետության հասնել, այստեղ ուղղակի սարսափում ես: Այդ ծրագրի մեջ ամենասարսափելիին աշխարհի բնակչության կտրուկ կրճատումն է: Այդ կազմակերպության լծկան որոշ քաղաքագետներ գրում են, որ Հայաստանի նման երկրներում բնակչության մեկ երրորդը կամ նույնիսկ երկու երրորդը պետք է ամենտանա առաջիկա 20 տարում:

Աշխարհակործան այդ ծրագրի մեջ է մտնում աշխարհի պետություններին սահմանադրություններ եւ օրենքներ պարտադրելը: Օրինակ, նշած կազմակերպության կառույցներից մեկի՝ Վենետիկի համաձայնագրի կողմից, մեր վրին փաթեթվեց մի սահմանադրություն, որը, չնայած նրան, որ մեր ժողովուրդը մերժեց, այդուհանդերձ այն դարձրին իրողություն: Հիմա, երբ անկախ մեզմիջ ընդունվել է այդ սահմանադրությունը, որպես 33 քաղաքացի ես հնարավորություն ստացա մեր հասարակությանը հասկանալի դարձնել, որ այս ընտրությունը համակարգային փոփոխություններ իրականացնելու համար կոնկրետ քայլեր ձեռնարկելու մեր վերջին հնարավորությունն է, կոնկրետ ինձ տրված վերջին շանսը:

– **Չնայած Ընտրական օրենսգրքի մասին խոսելը ժամանակավորապես է, բայց կուզենայինք լսել դրա վերաբերյալ Ձեր կարծիքը:**  
– Ընտրական օրենսգրքի, հատ-

կապես Աժ ընտրությունների «ռեյտինգային» ցուցակի մասն արդեն իսկ աբսուրդ է, ծիծաղելի: Ավելին ասել չեմ ուզում, ինքնեդ կհամոզվեք ընտրությունների ավարտից հետո: Հիմա արդեն դա կարելու էլ չէ: Չնայած հարց չտրվեց, այդուհանդերձ, կարելու էր եմ նաև ասել, որ ընդհանրապես մեր երկրում տիրող այս իրավիճակը ծրագրավորել է համաշխարհային տիրապետության ձգտող ասած կառույցը: Հայաստանի նման երկրները, որոնց տնտեսությունն օլիգարխիկ-ֆինանսական համակարգի կրկնի տակ է, չեն կարող կազմակերպել արդյունաբերության եւ հատկապես գյուղատնտեսության վերականգնումը: Նրանց պարզապես թույլ չեն տա դա անել: Դրա հետևանքները հայերիս համար կլինեն սարսափելի: Ծրագրված քառսի պայմաններում (ծրագրված տեղական պատերազմներ եւ հակամարտություններ, շրջափակումներ, գյուղատնտեսության ավերում, քրեաօլիգարխիկ իշխանություններ), ինչպես մեր գիտնականներից մեկն է փաստում, կսկսվի համատարած սով: Կսկսեն կիրառել զենոնդիֆիկացված մթերքներ, կկիրառվեն պարտադիր վակցինային ներարկումներ: Այդ ամենը նշանակում է, որ էլ ավելի կիջնի ծնելիության ցուցանիշը, եւ բնակչությունն էլ ավելի կկրճատվի:

Այդ մարդակուլ ծրագրի ֆոնին առավել ակտիվ կգործեն հատկապես համաշխարհային ֆինանսական այնպիսի կառույցներ, ինչպիսիք, օրինակ, Համաշխարհային բանկն ու Արժույթի միջազգային հիմնադրամն են, որոնց միջոցով, ինչպես հայտնի տնտեսագետ Ջոն Պերկինսն է ասում, մեր նման երկրները կհայտնվեն դեֆլատի մեջ, ուղղակի կոչնչանան: Պատահական չէ, որ մամուլն այսօր արդեն իսկ հրապարակում է շուրջ 6 մլրդ դոլար մեր արտաքին պարտքի եւ օժիտում 12 մլրդ դոլարի առկայության մասին:

– **Ինչո՞ւ ընտրեցիք «ՕՐՕ» դաշինքը:**  
– «Օհանյան-Րաֆֆի-Օսկանյան» դաշինքում ընդգրկված են մարդիկ, որոնց մի մասին բավականաչափ ճանաչում եմ, մի մասի

*Միխայել Վոլոդյայի Օհանյան. ծնվել է 1954թ. փետրվարի 2-ին Մեղրի քաղաքում: Տեղի Ստեփան Շահումյանի անվան միջն. դպրոցը 1971-ին ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսներ եւ վարկ» բաժինը, որն ավարտել է 1976-ին: Այնուհետեւ գործուղվել է Մեղրի եւ աշխատել շրջխորհրդի գործկոմի ֆինբաժնի ավագ վերահսկիչ-վերստուգիչ (1976-77թթ.), որից հետո ընտրվել է կոմերիտմիության Մեղրու շրջկոմի քարտուղար: 1977թ. ընտրվել է կոմերիտմիության Մեղրու շրջկոմի առաջին քարտուղար եւ աշխատել մինչեւ 1981թ.: 1981-83թթ. եղել է Մեղրու կուսընկերության բաժնի վարիչի տեղակալ, 1983-85թթ.՝ շրջխորհրդի գործկոմի մշակույթի բաժնի վարիչ, 1985-91թթ.՝ կուսընկերության բաժնի վարիչ, 1991-93թթ.՝ Մեղրու ԲՈՒՄՏ-ի տնօրեն: 1993-2013թթ. Մեղրու բանկային համակարգում էր: 2012թ. սեպտեմբերի 12-ին ընտրվել է Մեղրի համայնքի ավագանու անդամ, ավագանու բնապահական հանձնաժողովի*



դուլի նախագահ: 2013թ մոյեմբերի 19-ին հրաժարվել է ավագանու անդամի պարտականություններից՝ քաղաքապետի եւ ավագանու անդամների մեծամասնության հետ սկզբունքային տարակարծություններ ունենալու պատճառով: 2013 թվականից աշխատում է «Մեղրու ՇՇՇ» ՍՊԸ-ում՝ տնտեսագետ: Ամուսնացած է, ունի մեկ դուստր եւ երկու որդի, երկու թոռ:

հանդեպ ունեմ առանձնահատուկ հարգանք եւ վերաբերմունք, որովհետեւ նրանց անցած ուղին, գործունեությունը եւ երկրի հետագա զարգացման մասին ունեցած պատկերացումները շատ համահունչ են իմ պատկերացումներին: Այս ընթացքում ունեցած անձնական շփումներն ապացուցեցին, որ նրանք ոչ միայն ճիշտ գաղափարների կրողներն են, այլեւ երկիրն այս ծանր վիճակից դուրս բերելու ճանապարհ, տեսլական ու գործողությունների ծրագրեր ունեն:

– **Հետաքրքիր մի իրողություն, այնուամենայնիվ, չե՞ք կարող չարձանագրել. «ՕՐՕ» դաշինքի լիդերները ժամանակին 33 կառավարության մաս են կազմել, բայց այսօր ձեւավորել են ընդդիմադիր քաղաքական ուժ:**

– Գաղտնիք չէ, որ այսօր գրեթե բոլորն իրենց տակառները գլորում են միայն մեր դաշինքի ուղղությամբ: Դուք չեք հարցնում՝ ինչու: Այնպես չէ, որ այդ մարդիկ իրենց ընդդիմադիր են համարում, պարզապես նրանք ունեն այնպիսի պատկերացումներ, երկրի զարգացման այնպիսի տեսլական, որն էականորեն տարբերվում է մյուսներից, հետո, քաղաքական դաշտի ծրագրողների հաշվարկներում մեր դաշինքը չի եղել, ինչից էլ դաշինքի հանդեպ լարվածություն է ձեւավորվել:

– **Հատկապես վերջին տարիների ընտրությունները ցույց տվեցին, որ Մեղրու տարածաշրջանում, կարծեք, Հայաստանի հանրապետական կուսակցությունն իշխում է: Եթե համակարծիք եք, ապա ինչո՞վ եք պայմանավորում այդ միաբերությունը:**

– Ինչո՞ւ միայն Մեղրիում. որեւէ մեկին չեմ պատրաստվում քննադատել, առավել եւս որեւէ մեկի հնարավորությունները թերագնահատել: Հարգանք եմ տածում առհասարակ բոլորի հանդեպ: Նույնիսկ իմ «հակառակորդին» փորձում եմ հասկացնել, որ այն, ինչ անում եմ, նաեւ նրա ընտանիքի, երեխայի ապագայի համար է, որ ինձ համար ամենակարեւորն է, քանի որ նրանք հայ մարդիկ են: Թե նրանք ինչ խոսքեր կասեն իմ հասցեին կամ ինչպիսի լարվածություն կառաջացնեն, դա ինձ չի հետաքրքրում, ինձ հետաքրքրում է միայն, թե ես իմ խորքային պատկերացումներով եւ իմ գործողություններով ինչպես կարող եմ օգտակար լինել հայ մարդուն, Հայաստան աշխարհին: Ապրելուս իմաստի մեջ այդ գաղափարն է կարեւորում՝ ամեն ինչ հայ մարդու եւ նրա ապագայի համար:

|| **Ցավոք սրտի, մեր ինտելեկտուալ զանգվածի մեծ մասը հեռացել է երկրից, ինչը նույնպես վատ քաղաքականության, միաբերելու մոտեցումների արդյունք է:**

Հայրենիքը լքեցին խելացի, ունակ մարդիկ, եւ այսօր, երբ ես փորձում եմ դիմացիմին որեւէ բան բացատրել, ստեղծված իրողությունն ընկալելի դարձնել, դժվարությամբ առաջ եմ կանգնում: Այն զանգվածը, որ ունակ էր իշխանությունների որոշ գործողությունների դեմ առնելու, միաբերությունը կանխելու, ստեղծված վիճակի ողբեր-

զականությունն ամբողջովին հասկանալու, այլեւս այստեղ չէ: Այժմ իմ հնարավորությունների ներածին չափով, կյանքիս մնացած ժամանակահատվածում կփորձեմ մեր հասարակությանը հասանելի դարձնել այն ամենը, ինչը, իմ խորին համոզմամբ, վտանգում է մեր լինելիությունը:

– **Ձեր դաշինքը նախընտրական քարոզարշավը սկսել է Տավուշի մարզից, Այոնի մարզում ե՞րբ է նախատեսվում:**

– Մարտի 14-15-ին կլինեն մարզի տարածքում, իսկ կոնկրետ Մեղրու տարածաշրջանում՝ մարտի 15-ին: Թե դաշինքից ովքեր կայցելեն մեր մարզ, չեն կարող ասել, անկեղծ ասած՝ անձերի խնդիրն այնքան էլ չեմ կարեւորում: Դաշինքի բոլոր անդամներն էլ նույն գաղափարն ունեն, նույն ասելիքն ու անելիքը, այդ իսկ պատճառով ով էլ հանդիպի ընտրողին, կներկայացնի այդ ամբողջը:

Այս ընտրությունների թերություններից մեկն էլ այն է, որ քարոզարշավի ժամանակահատվածը շատ կարճ է, եւ ընտրողը ներկայացված ինք քաղաքական ուժին, նրանց ծրագրերին ծանոթանալու ժամանակ չունի: Բոլոր քաղաքացիները հո ընկալելու հավասար ունակություններ չունեն՝, համապատասխան հետեւություններ անելու, տրվածը մարսելու համար ժամանակ է հարկավոր: Եվ, իմ համոզմամբ, սա նույնպես ծրագրավորված է, պատահական չէ նաև այն, որ Ընտրական օրենսգրքում այդ ռեյտինգը ասվածն են մտցրել, որ կուսակցության ներսում իրարից ծայրեր փախցնեն: Սա նույնպես

# Կարեն Կարապետյանը ծանոթացել է Սյունիքի մարզի զարգացման ծրագրերին

Եջ 1 ն եւ որանց որակի բարձրացմանը: Ըստ արդեն իսկ մշակված գլխավոր հատակագծի՝ ծրագրի առաջին փուլով նախատեսվում է ստեղծել այցելուների կենտրոն, ազգային խոհանոցն ու ավանդույթները ներկայացնող սենդի օբյեկտներ, հին ավանդական հայկական խաղերի եւ զվարճանքի կենտրոն: Ծրագիրը նախատեսում է 6 ռազմավարական ուղղությամբ շուրջ 95 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրումներ, որի արդյունքում կստեղծվի մոտ 1500 նոր աշխատատեղ, իսկ տարածաշրջան այցելող զբոսաշրջիկների թիվը կբառապատկվի՝ հասնելով տարեկան 400 հազարի: Նշվել է, որ ծրագիրը հնարավոր է իրականացնել պետություն-մասնավոր համագործակցությամբ եւ «Տաթեյեր» ճոպանուղու «Հալիձոր» կայանի հարակից տարածքում անհրաժեշտ է լուծել ենթակառուցվածքային խնդիրներ: Նախատեսվում է միջոցներ ներգրավել նաեւ միջազգային ֆինանսական կազմակերպություններից: Վարչապետը ողջունել է ծրագրի նախագիծը՝ առաջարկելով այն բերել վերջնական տեսքի եւ առաջիկայում առարկայական քննարկել կառավարությունում:

ստեղծագործական միջավայրում, կծանոթանան մյուս դպրոցների խմբակների աշակերտների աշխատանքներին: «Արմաթ» ինժեներական լաբորատորիաները, որոնք մարզային համաչափ զարգացման նպատակով առաջնահերթ հիմնվում են մարզերում, գործում են ՀՀ-ի ու Արցախի շուրջ 200 դպրոցում: «Արմաթ»-ում այժմ սովորում է ավելի քան 5 հազար դպրոցական: Կարեն Կարապետյանը կարեւորել է տեխնոլոգիական կրթության շարունակական զարգացումը մեր երկրում եւ ընդգծել, որ Հայաստանի համար տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը կարող է դառնալ տնտեսության առաջընթացի շարժիչ ուժ:

\*\*\*

Սյունիքի մարզ կատարած աշխատանքային այցի երկրորդ օրը վարչապետ Կարեն Կարապետյանն այցելել է Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ: Չեռնարկության ղեկավարությունը վարչապետին ներկայացրել է 2016թ. ֆինանսական ցուցանիշները եւ 2017թ. կանխատեսումները շուկայի արձագանքի ու ակնկալվող ծավալների վերաբերյալ: Կարեն Կարապետյանն առաջարկել է պասիվ դիտորդի կարգավիճակում չսպասել, թե շուկան երբ բարենպաստ կդառնա եւ կառավարություն ներկայացնել ծրագիր՝ միջոցառումների, ներդրումների եւ քայլերի որոշակի փաթեթ, որոնք կնպաստեն ձեռնարկության արդյունավետության բարձրացմանը: Վարչապետը կառավարության անունից պատրաստակամություն է հայտնել քննարկել կոմբինատին աջակցության հնարավորությունները: «Մենք շահագրգռված ենք, որպեսզի մեր գործարարները, նման խոշոր ձեռնարկությունները լինեն հաջողակ, ներդրողները բավարարված լինեն իրենց եկամտաբերությունից, որովհետեւ դրա մուլտիպլիկատիվ էֆեկտը մեր բոլորի բարեկեցիկ սպազան է: Դա աշխատավարձ է, նոր աշխատատեղեր, սոցիալական պատասխանատվություն եւ, վերջիվերջո, հարկեր: Սպասում ենք ձեռնարկության ֆինանսական վիճակի առողջացման, բարելավման վերաբերյալ ձեր առաջարկություններին», - նշել է կառավարության ղեկավարը:

Ագարակից վարչապետ Կարապետյանն ուղեւորվել է Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ, շրջայց կատարել հանրապետության մարզերական ձեռնարկություններին տարածքում, ծանոթացել ընթացիկ իրավիճակին, ցուցանիշներին եւ զարգացման ծրագրերին: Կառավարության ղեկավարը եղել է նաեւ մարզի Սյունիք համայնքում կառուցվող «Սյունիք Ֆուդ» գործարանի տարածքում: Ընկերությունը նախատեսում է Սյունիքի մարզում զբաղվել մրգի եւ բանջարեղենի պահածոների վերամշակմամբ: Վարչապետին են ներկայացվել ներդրումային ծրագրի շրջանակում կատարվող աշխատանքների ընթացքը, արտադրության եւ արտահանման կանխատեսվող ծավալները: Նշվել է, որ ներդրումային ծրագրի արդյունքում նախատեսվում է ստեղծել շուրջ 210 աշխատատեղ:

12 մարտի 2017թ. gov.am



## «Պետք է փոխվենք ոչ միայն մենք, պետք է փոխվենք բոլորս»: Նախընտրական քարոզարշավի շրջանակում Կարեն Կարապետյանը հանդիպել է Սյունիքի մարզի ընտրողներին

ՀՀ վարչապետ, Հանրապետական կուսակցության նախագահի առաջին տեղակալ Կարեն Կարապետյանը կուսակցության անդամների հետ միասին 2017 թվականի խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի շրջանակում այցելել է ՀՀ Սյունիքի մարզի մի շարք համայնքներ: Կարեն Կարապետյանը Գորայք, Սիսիան եւ Գորիս համայնքների ընտրողներին է ներկայացրել ՀՀ նախընտրական ծրագրի դրույթները, նախատեսվող բարեփոխումները եւ պատասխանել նրանց հուզող մի շարք հարցերի՝ տնտեսական զարգացման, աշխատատեղերի ստեղծման, պետական կառավարման համակարգի բարեփոխման, տարածքային ու համայնքային համաչափ զարգացման վերաբերյալ:

Նրանց կապիտալը մարդն է՝ իր կարողություններով, ստեղծագործ աշխատանքով, եւ պետք է բոլոր պայմանները ստեղծենք, որպեսզի մարդը կարողանա իր աշխատանքով իր տունը պահել, իրեն ոչ ոք չխանգարի, արդարություն լինի, աշխատանքն արժանավայել գնահատվի, հնարավորություն տանք նրան, որպեսզի ստեղծի հավելյալ արժեք: Ներկայացրել ենք ծրագրեր ծյուղ առ ծյուղ՝ առողջապահություն, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, սոցիալական ոլորտ, կրթություն, մուլտիմեդիա պետական կառավարման համակարգ: Երբ ասում ենք՝ պետք է փոխվենք եւ մեզանից պետք է սկսենք, առաջին հերթին նկատի ունենք պետական կառավարման համակարգը: Մենք շատ բան ունենք փոխելու, բայց ծրագրի մեջ խուսափել ենք ու չենք գրել արհեստական ու ակամջը շոյող ոչ մի բան: Գիտենք՝ ինչ պրոբլեմ ունենք, ինչ հիվանդություն ունենք եւ ինչպես ենք շարժվելու առաջ: Մեզ սպասվում է քրտնաջան, կանոնավոր, ամենօրյա աշխատանք: Մենք իրականում շատ ունենք որոշ ծա-

մանակ անց ունենալ բարվոք պետություն, որով բոլորս կարող ենք հպարտանալ», - դիմելով սյունիքիներին՝ ասել է ՀՀ-ի առաջին փոխնախագահը: Կարեն Կարապետյանը նախ եւ առաջ ընդգծել է, որ ՀՀ-ն շատ հստակ ձեւակերպել է իր վերաբերմունքն Արցախի հիմնախնդրի լուծման առնչությամբ: «Արցախում, որտեղ հերոսաբար իրենց պարտք են կատարել նաեւ բազմաթիվ սյունիքցիներ, որոշվում է մեր ինքնապիտուկը, մեր վաղվա օրը, ընդհանրապես մեր կեցվածքը, թե ինչպես ենք կանգնելու աշխարհի առաջ»:

ՀՀ-ի առաջին փոխնախագահը մանրամասներ է ներկայացրել տարածքային կառավարման եւ համաչափ զարգացման տեսլականի վերաբերյալ՝ շեշտելով, որ յուրաքանչյուր մարզի առանձնահատկությունների հիման վրա մշակվել են զարգացման կոնկրետ ծրագրեր: «Սյունիքի մարզի հետ կապված մենք ունենք մեր պատկերացրած զարգացման հստակ ծրագիրը հետեւյալ









